

# ՔԱՐՈՉ ԽՈՍՎԿԱՆ

Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(1 փետրվարի 2004 թ.)

«Զի հաց յԱսլուծոյ է, որ իշանէ  
յեղկնից և կեանս դայ աշխարիի»:  
(Տովի. Զ 33)

«Յանուն Նօր և Որդույ և Նոգոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի և հավաքակից եղբայրներ և քոյրեր, Հայոց մեր Մայր Եկեղեցու սրբազն հայրերը հավկապես Ծննդյան այս Դ կիրակիի ընթերցանության համար ընդրել են հետքայալ Ավելարասնական հավաքած՝ վերսպին հրավիրելով մասնակից դառնալու սիրո այս սեղանին, «որովհենքն Ասքուոց է այն հացը, որ իշնում է երկնքից և կյանք է փալիս աշխարհին»:

Ֆիավասիկ, թե ինչպես է խոսում Տերը՝ մեկ անգամ ևս անդրադարձ անելով Ս. Դաղորդության Սիրո Խորանին. «Ես եմ հացն կենաց, որ գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, և որ հաւաքայ յիս՝ ոչ երեք ծարաւեսցի» (Տովի. Զ 35): Կյանքի, ճշմարիկ կյանքի վարդապետությունն է ավանդել մեզ մեր Տերը դարեր առաջ, և այդ կյանքը սիրո դրսւորմամբ է արփահայրված, այն սիրով, որով Տերը սիրեց մեզ և պատվիրեց միմյանց սիրել, և որով պիտի Կենաց Բանին հետվառդեր լինենք ու ճանաչվենք:

Մարդկային կյանքի ֆիզիկական գոյության առաջին նախապայմանների՝ ուժեղիքի և ընպելիքի համազուգորդումով հոգևոր կյանքի հավիրենական գոյության հարավու պայմանների կամ պահանջների է կոչում Քրիստոս, որպեսզի մեր կյանքը նոր՝ սիրո պատվիրանով կարողանանք միմյանց հետ միշտ կապակցել և այդ ընկերույթին սիրո հորդումի քաղցրությունը միախառնել Ասքուոն սիրո հետ, որի կենդանի մարմնացումն է Դարուցյալ Փրկիչը, և Որը մարդուս գոյության այն ասքիճան անքակբելի մասն է, որ հանդիսանում է մարդկային կյանքի հաց, և Որի հետ հարապն, շարունակական հարաբերության կարիքն ունի կամ պիտի ունենա յուրաքանչյուր:

Դիսուս ասում է. «Ես եմ հացն կենաց» և երկու կարևոր շեշտադրում է կարարում.

Երբ Քրիստոսով քաղց ենք զգում, պետք է գնանք դեպի Իրեն:

Երբ Քրիստոսով ծարակ ենք, պետք է հավաքանք Իրեն:

Այսինքն՝ թեր Ս. Դաղորդության այս Խորհուրդով մեր քաղցն ու ծարավն է հագենում, ուրեմն պետք է հավաքայ Քրիստոսին ամբողջ Լության անկեղծությամբ և զորացած հավաքրով դեպի Քրիստոս քայլ ամեն ճշմարդությամբ ճանապարհով, բախել Փրկության Կենաց դուռը, և վսկահ եղեք, Տերն անկեղծ հավաքրի յուրաքանչյուր արփահայրության ունկնդիր է լինում և երեք անպատասխան չի թողնում մեր խնդրանքները:

Տիրոջ Մարմինն ու Արյունը ճշմարիկ կերակոր և ըմպելի են, որովհետք մեղքնի և սայթաբած անօրենությունների դիմաց դեղ են մաքրության և հավիտենության առհավաքցյա. «Որ ուրիշ զմարմին Իմ, և ըմպէ զարին Իմ, ունի զինանս յախիտենականս» (Տովի. Զ 55): Այս կապը զայիս է դուսա մեր նախահոր՝ Աղամի ժամանակներից, ով ուրելով մեղանչեց ու հետք մեռավ, այսինքն՝ մեր բնության մեջ մեղքը ուրելով ներգործեց, և մեզ այսօր Ասպված ևս մեկ անգամ առիթ է փայլս մարմնով, այսինքն՝ Փրկության Կննաց հույսով արդարանալ և անմահանանալ:

Սակայն այս ահավոր խորհրդից պետք է զգուշանալ, որովհետք Պողոս առաքյան սրավիեցնում է՝ ասելով. «Ձոդ մարդ նախ ինքն իրեն փորձի և ապա ուրիշ այդ հացից ու խմի այդ բաժանից, որովհետք ով ուրդում է և խմում անարժանորեն, իր իսկ դադապարզությունն է ուրդում և խմում, քանի որ չի զարդորոշում Տիրոջ մարմինը» (Ա Կորնթ. ԺԱ 28-29):

Մեր հայրերը ճշմարիկ հաղորդության երեք կարևոր կետ են նշում՝ հավաք, զիտուրյուն և սրբություն։ Հավաքալ ի Քրիստոս Եր վնօրինական բռոր խորհուրդներով, որը քրիստոնեական կենցաղավարության սկիզբն է ու հիմքը և որը հավիտենության առաջին գրավականն է։

Անշուշտ հավաքքն առանց իմացության և զարդորոշման անխմասք է, որովհետք եթե չզիտեն, թե ինչի և կամ ում ես հավաքում, չես կարող հավաքալ։

Առավել ևս եթե ամբողջ զիտուրյամբ հավաքք ունես առ Աստված և այդ ամենն առանց կյանքի է, այսինքն՝ սրբության ու մաքրության Քրիստոսավանդ Խաչի ճանապարհով կյանքում չի դրսերդվում, պարզապես մնում է այդպես անկենդան ու անզոր խոսք միայն։

Երեկ մեր Եկեղեցին փոնեց U. Սարգիս քաջազնի զորավարի, նրա որդի Մարտիրոսի և 14 զինվորների հիշարքակը, ովքեր մարտիրոսացան՝ դրսորելով անկուդրուն կամք, անուրանալի հավաքք ու մշտանորոգ սեր դեպի իրենց Արարիցը։ Այս սիրո ուժով Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի կարգադրությամբ Եկեղեցին հափկապես ուշադրություն է դարձնում մեր ազգի զորավոր կորիզոր հանդիսացող երիտասարդների վրա, ովքեր մեր ազգին հղոր ապագա և պայծառ երազների իրականացում են ներշնչում։

Այսօր այս U. Խորանի վրա Քրիստոսացող նշխարն ու զինին նոր սիրո լուծի քաղցր պատուին է, որ պիտի ներգործի մեր ժողովրդի հոգուց ներս և իր ուժով սրբազործի, զորացնի ու սիրով լսնին, «որովհետք Ասպծուց է այս հացը, որ իշուում է երկնքից և կյանք է փայլս աշխարհին... և թե մնկը այս հացից ուրիշ հավիտենապես կայրի» Քրիստոսի մեջ և Քրիստոս էլ կապի իր մեջ։

Ես մաղթում եմ, որ Նոր Ասրուծ առաջնորդությունը, Քրիստոս Ասրուծ մշտաման ներկայությունը և Ա. Ռոզու մշտամորոց ներգործությունն ամենքիս հետ լինի և մանավանդ երիտասարդներին անսասան հավաքք, Ասրուծային իմաստություն և սրբացող կենցաղավարություն շնորհի։

Տիրոջ շնորհը, սերը և խաղաղությունը թող միշտ մեզ հետ լինն և մեզ միշտ հաղորդության մեջ պահեն Ամենօրինյալ Ասրուծ հետ. ամեն։